

Հավելված N¹
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2023 թվականի նոյեմբերի -ի N¹--Ա որոշման

«Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2007 թվականի դեկտեմբերի 28-ի N⁶⁸⁷Ա որոշմամբ

«ՅՈՒԲՈՄ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Երևան քաղաքում անլար հասանելիության ամրակցված լայնաշերտ կապի ցանցի կազմակերպման համար 5650-5725ՄՀց և 5830-5851ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվության

Պայմանները

(Թույլտվություն N⁰²⁹⁶, տրված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի N⁶⁸⁷Ա որոշմամբ)

1. Սահմանումներ

1. Սույն թույլտվությունում գրված հիմնական հասկացությունները սահմանվում են հետևյալ կերպ.
 - 1) Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
 - 2) Թույլտվություն ունեցող անձ կամ Կարգավորվող անձ՝ «ՅՈՒԲՈՄ» փակ բաժնետիրական ընկերություն.
 - 3) Թույլտվություն՝ Հանձնաժողովի կողմից Կարգավորվող անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է ռադիոհաճախականություն որոշակի հատված օգտագործելու նրա իրավունքը և պարտականությունը.
 - 4) Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Կարգավորվող անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև

սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Կարգավորվող անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. Թույլտվության գործողության ժամկետը

2. Թույլտվությունն ուժի մեջ է մտնում 2007 թվականի դեկտեմբերի 28-ից:
3. Թույլտվությունը գործում է մինչև 2033 թվականի նոյեմբերի 19-ը:

3. Ռադիոհաճախականության օգտագործման էությունը կազմող գործառույթները

4. Թույլտվությունը ուժի մեջ մտնելու պահից Կարգավորվող անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Երևան քաղաքում անլար հասանելիության ամրակցված լայնաշերտ կապի ցանցի շահագործմամբ օգտագործել 5650-5725ՄՀց և 5830-5851ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածները՝ հետևյալ տեխնիկական ցուցանիշներով՝
 - 1) ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման նպատակը՝ տվյալների փոխանցման կազմակերպում.
 - 2) անլար հասանելիության ամրակցված լայնաշերտ կապի ցանցի օգտագործման տարածքը՝ քաղաք Երևան.
 - 3) օգտագործվող սարքավորման տեխնիկական ստանդարտի անվանումը՝ IEEE 802.16.
 - 4) բազային կայանների քանակը՝ 3.
 - 5) բազային կայանների տեղադրման վայրերը և աշխարհագրական կոորդինատները.

Բազային կայանի հերթական համարը	Բազային կայանի տեղադրման վայրը	Աշխարհագրական կոորդինատները	
1	ք. Երևան, Բաղրամյան 53-55	44E 29' 30"	40N 12' 00"
2	ք. Երևան, Նորք Մարաշ	44E 32' 17"	40N 10' 13"
3	ք. Երևան, Սայաթ-Նովա 19	44E 31' 10"	40N 11' 01"

6) հատկացված ռադիոհաճախականությունների հատվածը, հաղորդիչների հզորությունը, ճառագայթման դասը, տեղեկատվության հաղորդման արագությունը՝

Բազային կայանի հերթական համարը	Ռադիոհաճախականությունների հատվածը (ՄՀց)	Հաղորդչի հզորությունը (Վտ)	Ճառագայթման դասը	Տեղեկատվության հաղորդման արագությունը (կԲԻթ/վ)
1	5650-5725	0,5	10M0G9D	15360
2	5650-5725	0,5	10M0G9D	15360
3	5830-5851	0,6	3M50G7W	10000

7) անտենայի տեսակը, ուժեղացման գործակիցը, բարձրությունը երկրի մակերևույթից՝

Բազային կայանի հերթական համարը	Անտենայի տեսակը	Ուժեղացման գործակիցը (dBi)	Բարձրությունը երկրի մակերևույթից (մ)
1	պանելային	17	55
2	պանելային	17	40
3	սեկտորային	17	45

8) անտենայի ճառագայթման ազիմուտը՝ 360 աստիճան:

5. Կարգավորվող անձը յուրաքանչյուր նոր բազային ռադիոկայանը շահագործման ընդունելուց հետո, եռօրյա ժամկետում պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել բազային ռադիոկայանի տեխնիկական տվյալները (ռադիոկայանի հզորությունը, ընդունման/հաղորդման ռադիոհաճախականությունների հատվածները, ճառագայթման դասը, ռադիոկայանի տեղադրման վայրը և աշխարհագրական կոորդինատները, ընդունիչի տեսակը և զգայունությունը, անտենայի տեսակը, ուժեղացման գործակիցը, անտենայի դիագրամի ողղվածության լայնությունը, մեկ կրող ռադիոհաճախականության վրա ինֆորմացիոն (ստանդարտ հեռախոսային) կապուղիների քանակը:
6. Կարգավորվող անձն պարտավոր է ռադիոհաճախականությունների հատվածը օգտագործել այնպես, որ վնասակար ազդեցություն չունենա այլ անձանց ռադիոհաճախականության օրինական օգտագործման վրա:

4. Լիցենզավորված անձի գործունեությունը

7. Կարգավորվող անձը պարտավոր է իր գործունեությունը իրականացնել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի, Թույլտվության պայմանների և այլ իրավական ակտերի համաձայն:
8. Թույլտվությունը չի կարող օգտագործման տրվել այլ անձանց, օտարվել կամ գրավադրվել՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
9. Կարգավորվող անձը պարտավոր է իր նախաձեռնությամբ Թույլտվության պայմանների 4-րդ կետում նշված որևէ տեխնիկական ցուցանիշի փոփոխության դեպքում եռամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել կապի գծով քաղաքաշինության փաստաթղթերի մշակման լիցենզիա ունեցող անձանց կողմից մշակված անլար հասանելիության ամրակցված լայնաշերտ ցանցի տեխնիկական նախագիծը՝ երկու օրինակից:
10. Կարգավորվող անձը պարտավոր է անլար հասանելիության ամրակցված լայնաշերտ կապի ցանցի շահագործումից առնվազն 3 օր առաջ տեղեկացնել Հանձնաժողովին շահագործման մասին:
11. Կարգավորվող անձը պարտավոր է ապահովել Թույլտվությամբ հատկացված ռադիոհաճախականությունների հատվածի արդյունավետ օգտագործումը:
12. Կարգավորվող անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում վճարել ռադիոհաճախականությունների օգտագործման վճարները, եռամսյակը մեկ անգամ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը:
13. Կարգավորվող անձը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, պարտավոր է իր գործունեության մասին տեղեկատվություն ներկայացնել Հանձնաժողով:
14. Կարգավորվող անձը պատասխանատվություն է կրում իր գործունեության մասին Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար:

15. Կարգավորվող անձի՝ Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվությունը հրապարակային է, եթե այն Կարգավորվող անձի կողմից չի համարվում գաղտնի և նշված չէ որպես «գաղտնապահական տեղեկատվություն»:
- Կարգավորվող անձն իրավունք ունի ներկայացնել փաստարկներ և հիմնավորումներ՝ ապացուցելու համար, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «գաղտնապահական տեղեկատվությունը») հրապարակումը կարող է վնասել իր գործունեության շահերին:
- Հանձնաժողովն իրավասու է ընդունել կամ մերժել նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Կարգավորվող անձի խնդրանքը:
16. Կարգավորվող անձը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում Հանձնաժողով հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել կամ կարող են հանգեցնել Թույլտվության պայմանների խախտման:

5. Գործունեության վերահսկում

17. Թույլտվության պայմանների կատարման կամ պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:
18. Թույլտվության պայմանների կատարման կամ պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը կամ նրա լիազոր ներկայացուցիչներն իրավունք ունեն անարգել մուտք գործել Կարգավորվող անձի տարածք: Վերահսկումն իրականացնելու ընթացքում Կարգավորվող անձը պարտավոր է լիովին համագործակցել և աջակցել Հանձնաժողովին կամ նրա լիազոր ներկայացուցիչներին:
19. Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում իր ներկայացուցիչների միջոցով, իր կողմից սահմանված կարգով և ժամկետներում, իրավունք ունի իրականացնելու Թույլտվության պայմանների պահպանման ուսումնասիրություն և Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հավաստիության ստուգում:

6. Պատժամիջոցներ

20. Կարգավորվող անձի կողմից «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի պահանջները կամ Թույլտվության պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքում Հանձնաժողովն իրավասու է իր կողմից սահմանված կարգով կիրառել հետևյալ պատժամիջոցները՝

- 1) տույժերի և տուգանքների կիրառում,
- 2) Թույլտվության փոփոխում,
- 3) Թույլտվության կասեցում,
- 4) Թույլտվության գործողության դադարեցում:

21. Կարգավորվող անձը Թույլտվության 20-րդ կետի համաձայն չի ենթարկվում պատասխանատվության, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս մատրիի հետևանք են:

7. Թույլտվության փոփոխություն, ժամկետի երկարաձգում, Թույլտվության կորստի դեպքում կրկնօրինակի տրամադրում

22. Անլար հասանելիության ամրակցված լայնաշերտ կապի ցանցի շահագործման ընթացքում տեխնիկական ցուցանիշների ցանկացած փոփոխության դեպքում Կարգավորվող անձը անհապաղ դիմում է Հանձնաժողով՝ Թույլտվության մեջ փոփոխություններ կատարելու կամ նոր Թույլտվություն ստանալու հայտով:

23. Թույլտվության պայմաններում փոփոխություններ կարող են կատարվել Հանձնաժողովի կամ Կարգավորվող անձի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

24. Թույլտվության կորստի (կորցնելու, ոչնչանալու և այլն) կամ գործողության ժամկետի երկարաձգման անհրաժեշտության դեպքում Կարգավորվող անձը պարտավոր է հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ վերջինիս կողմից սահմանված կարգով:

8. Այլ պայմաններ

25.Թույլտվության գործողությունը կարող է կասեցվել կամ դադարեցվել Կարգավորվող անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Ծանուցում

26.Սույն Թույլտվության պայմաններով նախատեսված իրազեկումը, այդ թվում փաստաթղթերի հանձնումը, կատարվում է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:»:

Հավելված №2
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2023 թվականի նոյեմբերի –ի N°--Ա որոշման

«Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2008 թվականի հունիսի 25-ի N°328Ա որոշմամբ

**«ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերության կողմից
Հայաստանի Հանրապետության տարածքում անլար
հասանելիության ամրակցված լայնաշերտ կապի ցանցի
կազմակերպման համար 3400-3450ՄՀց
ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման
թույլտվության**

Պայմանները

**(Թույլտվություն N°0390, տրված Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008
թվականի հունիսի 25-ի N°328Ա որոշմամբ)**

1. Սահմանումներ

1. Սույն թույլտվությունում գրված հիմնական հասկացությունները սահմանվում են հետևյալ կերպ.
- 1) Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
- 2) Թույլտվություն ունեցող անձ կամ Կարգավորվող անձ՝ «ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերություն.
- 3) Թույլտվություն՝ Հանձնաժողովի կողմից Կարգավորվող անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է ռադիոհաճախականություն որոշակի հատված օգտագործելու նրա իրավունքը և պարտականությունը.
- 4) Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Կարգավորվող անձի կամ քից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև

սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Կարգավորվող անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. Թույլտվության գործողության ժամկետը

2. Թույլտվությունն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունիսի 25-ից:
3. Թույլտվությունը գործում է մինչև 2033 թվականի նոյեմբերի 19-ը:

3. Ռադիոհաճախականության օգտագործման էությունը կազմող գործառույթները

4. Թույլտվությունը ուժի մեջ մտնելու պահից Կարգավորվող անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Հայաստանի Հանրապետության տարածքում անլար հասանելիության ամրակցված լայնաշերտ կապի ցանցի շահագործմամբ օգտագործել 3400-3450ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածը՝ հետևյալ տեխնիկական ցուցանիշներով՝
 - 1) ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման նպատակը՝ տվյալների փոխանցման կազմակերպում.
 - 2) անլար հասանելիության ամրակցված լայնաշերտ կապի ցանցի օգտագործման տարածքը՝ Հայաստանի Հանրապետության տարածք.
 - 3) օգտագործվող սարքավորման տեխնիկական ստանդարտի անվանումը՝ IEEE 802.16.
 - 4) բազային ռադիոկայանների քանակը՝ 28.
 - 5) բազային ռադիոկայանների տեղադրման վայրը և տեղադրման վայրերի աշխարհագրական կոորդինատները՝

Բազային կայանի h/h	Բազային ռադիոկայանի տեղադրման վայրը	Աշխարհագրական կոորդինատները	
1	2	3	
1. Արագածոտնի մարզ			
1	ք.Աշտարակ, հեռուստաաշտարակ	44E 22' 12"	40N 18' 27"

2	ք.Ապարան, հեռուստաաշտարակ	44E 20' 50"	40N 34' 30"
2. Արարատի մարզ			
1	ք.Վեդի, հեռուստաաշտարակ	44E 40' 33"	39N 56' 41"
3. Արմավիրի մարզ			
1	ք.Արմավիր	44E 02' 21"	40N 09' 17"
2	ք.Էջմիածին	44E 17' 49"	40N 09' 55"
4. Գեղարքունիքի մարզ			
1	ք.Գավառ, հեռուստաաշտարակ	45E 07' 58"	40N 22' 51"
2	ք.Սևան, հեռուստաաշտարակ	44E 56' 34"	40N 33' 34"
3	ք.Մարտունի, հեռուստաաշտարակ	45E 18' 15"	40N 07' 37"
4	ք.Վարդենիս, հեռուստաաշտարակ	45E 45' 41"	40N 12' 58"
5. Լոռու մարզ			
1	ք.Վանաձոր, հեռուստաաշտարակ	44E 26' 57"	40N 49' 20"
2	ք.Սպիտակ, հեռուստաաշտարակ	44E 15' 49"	40N 49' 54"
3	ք.Ստեփանավան, հեռուստաաշտարակ	44E 20' 56"	41N 04' 14"
4	ք.Ալավերդի, հեռուստաաշտարակ	44E 39' 28"	41N 05' 48"
6. Կոտայքի մարզ			
1	ք.Հրազդան, հեռուստաաշտարակ	44E 46' 04"	40N 30' 49"
2	ք.Զարենցավան, հեռուստաաշտարակ	44E 36' 59"	40N 22' 59'
7. Շիրակի մարզ			
1	ք.Գյումրի, հեռուստաաշտարակ	43E 50' 50"	40N 49' 05"
8. Սյունիքի մարզ			
1	ք.Կապան, հեռուստաաշտարակ	46E 23' 59"	39N 11' 36"
2	ք.Գորիս, հեռուստաաշտարակ	46E 21' 43"	39N 31' 13"
3	ք.Սիսիան, հեռուստաաշտարակ	45E 59' 29"	39N 32' 13"

4	ք.Քաջարան, հեռուստաաշտարակ	46E 10' 45"	39N 08'21"
5	ք.Մեղրի, հեռուստաաշտարակ	46E 14' 45"	38N 53' 38"
6	ք.Ագարակ, հեռուստաաշտարակ	46E 10' 59"	38N 53' 39"
9. Վայոց ձորի մարզ			
1	ք.Եղեգնաձոր, հեռուստաաշտարակ	45E 19' 31"	39N 45' 55"
2	ք.Զերմուկ, հեռուստաաշտարակ	45E 39' 49"	39N 49' 51"
10. Տավուշի մարզ			
1	ք.Իջևան, հեռուստաաշտարակ	45E 11' 36"	40N 51' 51"
2	ք.Նոյեմբերյան, հեռուստաաշտարակ	45E 59' 24"	41N 10' 38"
3	ք.Դիլիջան հեռուստաաշտարակ	44E 51' 57"	40N 44' 34"
11. Երևան քաղաք			
1	Սեբաստիա 37	44E 27' 40"	40N 11' 10"

- 6) բազային ռադիոկայանների հզորությունը՝
մարզերում՝ 40Վտ.
Երևան քաղաքում՝ 0,6Վտ.
- 7) հատկացված ռադիոհաճախականությունների հատվածը
(հաղորդման/ընդունման)՝ 3400-3450ՄՀց.
- 8) ճառագայթման դասը՝
մարզերում՝ 10M0G7W.
Երևան քաղաքում՝ 3M50G7W.
- 9) տեղեկատվության հաղորդման արագությունը՝
մարզերում՝ 23Մբիթ/վ.
Երևան քաղաքում՝ 10Մբիթ/վ.
- 10) անտենաների տեսակը, ուժեղացման գործակիցը, բարձրությունը
երկրի մակերեսից, ճառագայթման ազիմուտը՝

Բազային կայանի հերթական համարը	Բազային ռադիոկայանի տեղադրման վայրը	Անտենայի տեսակը	Ուժեղացման գործակիցը (dBi)	Բարձրությունը երկրի մակերեսից (մ)	Ճառագայթման ազիմուտը (աստիճան)
--------------------------------	-------------------------------------	-----------------	----------------------------	-----------------------------------	--------------------------------

1	2	3	4	5	6
1. Արագածոտնի մարզ					
1	ք.Աշտարակ, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 120°)	17	40	360
2	ք.Ապարան, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 120°)	17	40	360
2. Արարատի մարզ					
1	ք.Վեդի, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 120°)	17	40	360
3. Արմավիրի մարզ					
1	ք.Արմավիր	պանելային (սեկտորի բացվածքը 90°)	17	25	360
2	ք.Էջմիածին	պանելային (սեկտորի բացվածքը 90°)	17	25	360
4. Գեղարքունիքի մարզ					
1	ք.Գավառ, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 90°)	17	40	360
2	ք.Սևան, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 120°)	17	40	360
3	ք.Մարտունի, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 90°)	17	40	360
4	ք.Վարդենիս, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 90°)	17	40	360
5. Լոռու մարզ					

1	ք.Վանաձոր, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 120°)	17	40	360
2	ք.Սպիտակ, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 90°)	17	40	360
3	ք.Ստեփանավան, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 90°)	17	40	360
4	ք.Ալավերդի, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 120°)	17	40	360
6. Կոտայքի մարզ					
1	ք.Հրազդան, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 90°)	17	40	360
2	ք.Չարենցավան, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 90°)	17	40	360
7. Շիրակի մարզ					
1	ք.Գյումրի, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 90°)	17	40	360
8. Սյունիքի մարզ					
1	ք.Կապան, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 90°)	17	40	360
2	ք.Գորիս, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 90°)	17	40	360
3	ք.Սիսիան, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 90°)	17	40	360
4	ք.Քաջարան, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 90°)	17	40	360

	հեռուստաաշտարակ	բացվածքը 90°)			
5	ք.Մեղրի, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 90°)	17	40	360
6	ք.Ագարակ, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 90°)	17	40	360
9. Վայոց ձորի մարզ					
1	ք.Եղեգնաձոր, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 120°)	17	40	360
2	ք.Զերմուկ, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 120°)	17	40	360
10. Տավուշի մարզ					
1	ք.Իջևան, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 120°)	17	40	360
2	ք.Նոյեմբերյան, հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 120°)	17	40	360
3	ք.Դիլիջան հեռուստաաշտարակ	պանելային (սեկտորի բացվածքը 120°)	17	40	360
11. Երևան քաղաք					
1	Սեբաստիա 37	սեկտորայի ն	17	10	360

5. Կարգավորվող անձը յուրաքանչյուր բազային ռադիոկայանը շահագործման ընդունելուց առաջ, պարտավոր է ստանալ Հանձնաժողովի համաձայնությունը (Թույլտվության 7-րդ կետով նախատեսված պայմանի ապահովման նկատառումով)՝ ներկայացնելով բազային ռադիոկայանի տեխնիկական տվյալները (ռադիոկայանի հզորությունը, ընդունման/հաղորդման ռադիոհաճախականությունների հատվածները,

ճառագայթման դասը, ռադիոկայանի տեղադրման վայրը և աշխարհագրական կոորդինատները, ընդունիչի տեսակը և զգայունությունը, անտենայի տեսակը, ուժեղացման գործակիցը, անտենայի դիագրամի ողղվածության լայնությունը, մեկ կրող ռադիոհաճախականության վրա ինֆորմացիոն (ստանդարտ հեռախոսային) կապուղիների քանակը:

6. Կարգավորվող անձը պարտավոր է ռադիոհաճախականությունների հատվածը օգտագործել այնպես, որ վնասակար ազդեցություն չունենա այլ անձանց ռադիոհաճախականության օրինական օգտագործման վրա:
7. Կարգավորվող անձը էլեկտրամագնիսական համատեղելիությունն ապահովելու նպատակով պարտավոր է համագործակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ՝ ընդ որում, տրամադրված ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման ընթացքում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը պատկանող ռադիոհաղորդիչ սարքավորումների վրա ազդեցության հայտնաբերման դեպքում առաջնահերթությունը վերապահվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը պատկանող ռադիոհաղորդիչ սարքավորումներին:

4. Կարգավորվող անձի գործունեությունը

8. Կարգավորվող անձը պարտավոր է իր գործունեությունը իրականացնել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի, Թույլտվության պայմանների և այլ իրավական ակտերի համաձայն:
9. Թույլտվությունը չի կարող օգտագործման տրվել այլ անձանց, օտարվել կամ գրավադրվել՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
10. Կարգավորվող անձը պարտավոր է իր նախաձեռնությամբ Թույլտվության պայմանների 4-րդ կետում նշված որևէ տեխնիկական ցուցանիշի փոփոխության դեպքում եռամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել կապի գծով քաղաքաշինության փաստաթղթերի մշակման

լիցենզիա ունեցող անձանց կողմից մշակված անլար հասանելիության լայնաշերտ ցանցի տեխնիկական նախագիծը՝ երկու օրինակից:

11. Կարգավորվող անձը պարտավոր է ապահովել Թույլտվությամբ հատկացված ռադիոհաճախականությունների հատվածի արդյունավետ օգտագործումը:
12. Կարգավորվող անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում վճարել ռադիոհաճախականությունների օգտագործման վճարները, եռամսյակը մեկ անգամ՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը:
13. Կարգավորվող անձը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, պարտավոր է իր գործունեության մասին տեղեկատվություն ներկայացնել Հանձնաժողով:
14. Կարգավորվող անձը պատասխանատվություն է կրում իր գործունեության մասին Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար:
15. Կարգավորվող անձի՝ Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվությունը հրապարակային է, եթե այն Կարգավորվող անձի կողմից չի համարվում գաղտնի և նշված չէ որպես «գաղտնապահական տեղեկատվություն»: Կարգավորվող անձն իրավունք ունի ներկայացնել փաստարկներ և հիմնավորումներ՝ ապացուցելու համար, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «գաղտնապահական տեղեկատվությունը») հրապարակումը կարող է վնասել իր գործունեության շահերին: Հանձնաժողովն իրավասու է ընդունել կամ մերժել նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Կարգավորվող անձի խնդրանքը:
16. Կարգավորվող անձը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում Հանձնաժողով հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել կամ կարող են հանգեցնել Թույլտվության պայմանների խախտման:

5. Գործունեության վերահսկում

17. Թույլտվության պայմանների կատարման կամ պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:
18. Թույլտվության պայմանների կատարման կամ պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովի ներկայացուցիչներն իրավունք ունեն անարգել մուտք գործել Կարգավորվող անձի տարածք: Վերահսկումն իրականացնելու ընթացքում Կարգավորվող անձը պարտավոր է աջակցել Հանձնաժողովին:
19. Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում, իր կողմից սահմանված կարգով և ժամկետներում, իրավունք ունի իրականացնելու Թույլտվության պայմանների կատարման կամ պահպանման ուսումնասիրություն և Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հավաստիության ստուգում:

6. Պատժամիջոցներ

20. Կարգավորվող անձի կողմից «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի պահանջները կամ Թույլտվության պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքում Հանձնաժողովն իրավասու է իր կողմից սահմանված կարգով կիրառել հետևյալ պատժամիջոցները՝
- 1) տույժերի և տուգանքների կիրառում,
 - 2) Թույլտվության փոփոխում,
 - 3) Թույլտվության կասեցում,
 - 4) Թույլտվության գործողության դադարեցում:
21. Կարգավորվող անձը Թույլտվության 20-րդ կետի համաձայն չի ենթարկվում պատասխանատվության, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս մաժորի հետևանք են:

7. Թույլտվության փոփոխություն, ժամկետի երկարաձգում, Թույլտվության կորստի դեպքում կրկնօրինակի տրամադրում

22. Անլար հասանելիության ամրակցված լայնաշերտ կապի ցանցի շահագործման ընթացքում տեխնիկական ցուցանիշների ցանկացած

փոփոխության դեպքում Կարգավորվող անձը անհապաղ դիմում է Հանձնաժողով՝ Թույլտվության մեջ փոփոխություններ կատարելու կամ նոր Թույլտվություն ստանալու հայտով:

23. Թույլտվության պայմաններում փոփոխություններ կարող են կատարվել Հանձնաժողովի կամ Կարգավորվող անձի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

24. Թույլտվության կորստի (կորցնելու, ոչնչանալու և այլն) կամ գործողության ժամկետի երկարաձգման անհրաժեշտության դեպքում Կարգավորվող անձը պարտավոր է հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ վերջինիս կողմից սահմանված կարգով:

8. Այլ պայմաններ

25. Թույլտվության գործողությունը կարող է կասեցվել կամ դադարեցվել Կարգավորվող անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Ծանուցում

26. Սույն Թույլտվության պայմաններով նախատեսված իրազեկումը, այդ թվում փաստաթղթերի հանձնումը, կատարվում է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:»:

Հավելված №3
Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի ---ի
№-Ա որոշման

«Հավելված №1
Հաստատված է Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի 2008 թվականի նոյեմբերի 19-ի
№635Ա որոշմամբ

**«ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերության հանրային
էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման)
№0479 լիցենզիայի**

Պայմանները

1. Լիցենզիայում օգտագործված հիմնական հասկացությունները

1. Սույն լիցենզիայում օգտագործված հիմնական հասկացությունները սահմանվում են հետևյալ կերպ՝
 - 1) Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
 - 2) Լիցենզավորված անձ՝ «ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերություն.
 - 3) Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանց՝ էլեկտրոնային հաղորդակցության ցանց, որն ամբողջովին կամ հիմնականում օգտագործվում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցելու համար.
 - 4) Լիցենզիա՝ Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է Լիցենզավորված անձի՝ Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանց շահագործելու իրավունքը և պարտականությունը.
 - 5) Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ,

հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը.

- 6) Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն՝ էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն, որն առաջարկվում է հանրությանը կամ վերջնական օգտագործողների այնպիսի խմբակարգերի, որոնց շնորհիվ այն, ըստ էության, ուղղակիորեն հասանելի է դառնում հանրությանը.
- 7) Վերջնական օգտագործող՝ ցանկացած անձ, որն օգտագործում է Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ, սակայն այդպիսիք չի առաջարկում երրորդ անձանց.
- 8) Հաճախորդ կամ բաժանորդ՝ ցանկացած անձ, որն օգտագործում է Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ կամ դիմում է դրանց օգտագործման համար: Սույն հասկացությունը չի տարածվում այն անձանց վրա, որոնք առաջարկում կամ մատուցում են հեռահաղորդակցության ծառայություններ:

2. Լիցենզավորված գործունեության էությունը կազմող գործառույթները

2. Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում՝
 - 1) Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է ստեղծել կամ զարգացնել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանց կամ կազմակերպել դրա օգտագործումը,
 - 2) մինչև 2025 թվականի նոյեմբերի 19-ը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ նախապես համաձայնեցված բնակավայրերում՝ կանոնադրական կապիտալում ներդրում կատարելու միջոցով առնվազն 500 միլիոն դրամի կապիտալ ներդրումների իրականացմամբ զարգացնել կապի ենթակառուցվածքները: Լիցենզավորված անձի կողմից սույն ենթակետով սահմանված

պարտավորության կատարումը Հանձնաժողովը գնահատում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համապատասխան տեղեկատվության և Հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված՝ անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացության արդյունքների հաշվառմամբ,

3) գաղտնի,

4) մինչև 2026 թվականի նոյեմբերի 19-ը զարգացնել իր Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցը՝ Լիցենզիայի հավելվածով նախատեսված բնակավայրերում ապահովելով ամրակցված լայնաշերտ կապի ծառայությունների հասանելիություն՝ լարային օպտիկամանրաթելային և (կամ) 2570-2620ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործմամբ՝ առնվազն օպտիկամանրաթելային տեխնոլոգիայի ցանցով մատուցվող ծառայությանը համարժեք (ցանցի թողունակություն, տվյալների փոխանցման արագություն) անլար տեխնոլոգիաներով:

3. Լիցենզիայի գործողության ժամկետը

3. Լիցենզիան գործում է մինչև 2038 թվականի նոյեմբերի 19-ը:
4. Լիցենզավորված անձի գրավոր դիմումի հիման վրա Լիցենզիայի գործողության ժամկետն երկարաձգվում է տասնհինգ (15) տարով, եթե ոչ ուշ, քան Լիցենզիայի համապատասխան ժամկետի ավարտից վեց (6) ամիս առաջ Հանձնաժողովը էական առարկություններ չի ներկայացնում Լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման դեմ: Եթե առարկությունները ներկայացվում են Լիցենզիայի համապատասխան ժամկետի ավարտին նախորդող վեց (6) ամիսների ընթացքում տեղի ունեցող իրադարձությունների առնչությամբ, ապա Հանձնաժողովի կողմից առարկություններ ներկայացնելու դեպքում վերը նշված ժամկետային սահմանափակումները չեն կիրառվում: Ընդ որում, սույն կետում նշված դիմումը պետք է ներկայացվի ոչ շուտ, քան լիցենզիայի ընթացիկ ժամկետի ավարտից քսանչորս (24) ամիս առաջ, սակայն ոչ ուշ, քան դրա ավարտից տասներկու (12) ամիս առաջ:

Լիցենզավորված անձն իրավասու է ստանալ Լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգում, եթե Լիցենզիայի գործողության ժամկետի ընթացքում նրա գործողությունները բոլոր էական առումներով համապատասխանել են Լիցենզիայի և կիրառելի մյուս օրենքների ու իրավական ակտերի դրույթներին: Լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման դրույթները և պայմանները որոշելիս Հանձնաժողովը կարող է հաշվի առնել հանգամանքների ցանկացած փոփոխություն՝ ներառյալ տեխնոլոգիական առաջընթացը:

Դիմումի քննարկման ընթացքում Հանձնաժողովը Լիցենզավորված անձից կարող է պահանջել ցանկացած փաստաթղթեր կամ տեղեկատվություն, որոնք ողջամտորեն անհրաժեշտ են Լիցենզավորված անձի գործունեության վերոնշյալ համապատասխանության ստուգման համար:

5. Լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման համար վճարվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված կարգով և չափով:

4. Լիցենզավորված գործունեության աշխարհագրական տարածքը

6. Լիցենզավորված անձի գործունեության տարածքը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքն է:

5. Լիցենզավորված գործունեության պայմանները

7. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» և «Լիցենզավորման մասին» օրենքների, այլ օրենքների, Լիցենզիայի, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի ու ծառայությունների մատուցման պայմանագրերի պահանջներին:
8. Լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
9. Լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

10. Լիցենզավորված անձը պարտավոր է, հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցը զարգացնելու դեպքում, մինչ այդ, Հանձնաժողով ներկայացնել շահագործվող Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի տեխնիկական նախագծի փոփոխությունները՝ կատարված կապի ոլորտում քաղաքաշինության փաստաթղթերի մշակման լիցենզիա ունեցող անձանց կողմից:
11. Լիցենզավորված անձը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն համապատասխան ապահովել իրեն կողմից շահագործվող Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի հուսալիությունն ու անվտանգությունը:
12. Լիցենզավորված անձը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, Հանձնաժողով է ներկայացնում տեղեկատվություն և հաշվետվություններ լիցենզավորված գործունեության մասին:
13. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Հանձնաժողովի կողմից սահմանված իրավական ակտերի պահանջներին:
14. Լիցենզավորված անձը պարտավոր է վարել լիցենզավորված գործունեության առանձացված հաշվապահական հաշվառում:
15. Լիցենզավորված անձի՝ Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվությունը հրապարակային է, եթե այն Լիցենզավորված անձի կողմից չի համարվում գաղտնի և նշված չէ որպես «գաղտնապահական տեղեկատվություն»: Հանձնաժողովն իրավասու է ընդունել կամ մերժել նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:
16. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:
17. Լիցենզավորված անձի և Հաճախորդների կամ բաժանորդների, Վերջնական օգտագործողների փոխհարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հանձնաժողովի ընդունած և այլ իրավական ակտերով, ծառայությունների մատուցման պայմանագրերով:

18. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իր մոտ անցկացված՝ լիցենզավորված գործունեությանը վերաբերող աուդիտորական կամ իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները և արձանագրությունները (ակտերը)՝ համապատասխան գործողությունների ավարտից հետո 10-օրյա ժամկետում:
19. Լիցենզավորված անձի 25 և ավելի տոկոս բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) նկատմամբ իրավունքի օտարում, այլ կերպ փոխանցում, զիջում կամ գրավադրում, ինչպես նաև այդ անձի գործունեությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կանխորոշելու հնարավորություն տվող բաժնեմասի (բաժնետոմսի, փայի)՝ անկախ քանակից, օտարում, այլ կերպ փոխանցում, զիջում կամ գրավադրում կարող է իրականացվել միայն Հանձնաժողովի համաձայնությունը Լիցենզավորված անձի կողմից ստանալուց հետո:
20. Լիցենզավորված անձը պարտավոր է վերակազմակերպման կամ անվանափոխման, կամ գտնվելու վայրի (իրավաբանական հասցեի) փոփոխման դեպքում այդ փոփոխությունների իրավական ուժ ստանալու օրվանից սկսած 15-օրյա ժամկետում այդ մասին տեղեկացնել Հանձնաժողովին՝ կցելով նշված տեղեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթերը:
21. Լիցենզավորված անձը պարտավոր է ազգային անվտանգության մարմինների պահանջով իր ապարատային միջոցների կազմում ընդգրկել լրացուցիչ սարքավորումներ և ծրագրային միջոցներ, ինչպես նաև անհրաժեշտ պայմաններ ստեղծել ազգային անվտանգության մարմինների կողմից օպերատիվ-տեխնիկական միջոցառումներ անցկացնելու համար:
22. Լիցենզավորված անձը պարտավոր է օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ապահովել իրավապահ և ազգային անվտանգության աշխատակիցների մուտքը հաղորդակցության սարքավորումներին, ենթակառուցվածքներին, միացնող-անջատող, ուղղորդող և նմանատիպ այլ սարքերին, ներառյալ՝ գաղտնալսումների իրականացման համար անհրաժեշտ սարքերին:
23. Լիցենզավորված անձը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում Հանձնաժողով հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտման:

24. Լիցենզավորված անձն իր գործունեության իրականացման ընթացքում պետք է ղեկավարվի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներով, հանձնաժողովի ընդունած և այլ իրավական ակտերով:

25. Լիցենզավորված անձը պարտավոր է հանրային շարժական կապի ծառայությունների սակագները կամ դրանց ճշգրտումները համատարած կերպով հրապարակել իր գործառնական գրասենյակներում, ինչպես նաև սակագնի առաջարկվող յուրաքանչյուր ճշգրտման վերաբերյալ ծանուցել հանրությանն ու հանձնաժողովին:

6. Պատժամիջոցներ

26. Լիցենզավորված անձի կողմից «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով, Հանձնաժողովի իրավական ակտով սահմանված պահանջի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Հանձնաժողովն իրավասու է կիրառելու օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ, վերականգնելու մինչև խախտումը եղած դրությունը, կատարելու դրանից բխող գործողություններ (այդ թվում՝ հաշվարկ, վերահաշվարկ և այլն), ինչպես նաև տալու դրանց կամ խախտումը վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ՝ հաշվի առնելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով սահմանված առանձնահատկությունները:

27. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս մաժորի հետևանք են:

7. Ծանուցում

28. Սույն լիցենզիայի պայմաններով նախատեսված իրազեկումը, այդ թվում փաստաթղթերի հանձնումը, կատարվում է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հավելված
Լիցենզիայի

Բնակավայրերի ցանկ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

1	Ագարակավան գյուղ (Ագարակ)
2	Ալազյազ գյուղ
3	Աղծք գյուղ
4	Ավշեն գյուղ
5	Արայի գյուղ
6	Բազմաղբյուր գյուղ
7	Գեղարոտ գյուղ
8	Գետափ գյուղ
9	Դդմասար գյուղ
10	Դիան գյուղ
11	Դպրեվանք գյուղ
12	Թլիկ գյուղ
13	Լեռնապար գյուղ
14	Լեռնարոտ գյուղ
15	Խնուսիկ գյուղ
16	Ծաղկասար գյուղ
17	Ծիլքար գյուղ
18	Կանչ գյուղ (Գյալթո)
19	Կաքավաձոր գյուղ
20	Հակո գյուղ
21	Ձորագյուղ գյուղ
22	Ղազարավան գյուղ
23	Ճարճակիս գյուղ (Դերեկ)
24	Մելիքգյուղ գյուղ
25	Մեծաձոր գյուղ
26	Միջնատուն գյուղ
27	Միրաք գյուղ
28	Ներքին Բազմաբերդ գյուղ
29	Ներքին Սասնաշեն գյուղ
30	Նիգավան գյուղ
31	Նոր Ամանոս գյուղ
32	Նոր Եղեսիա գյուղ
33	Շամիրամ գյուղ
34	Շենկանի գյուղ
35	Շողակն գյուղ (Նորաշեն)
36	Պարտիզակ գյուղ
37	Ջամշու գյուղ
38	Ջրամբար գյուղ
39	Ռյա թագա գյուղ

40	Սիփան գյուղ
41	Սորիկ գյուղ
42	Վարդենուտ գյուղ
43	Վերին Բազմաբերդ գյուղ
44	Վերին Սասնաշեն գյուղ
45	Վերին Սասունիկ գյուղ
46	Տեղեր գյուղ
47	Փարալի գյուղ
48	Օթևան գյուղ (Բայսզ)

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

49	Զանգակատուն գյուղ
50	Լանջանիստ գյուղ
51	Լանջառ գյուղ
52	Լուսաշող գյուղ
53	Շաղափ գյուղ
54	Ուրցալանջ գյուղ
55	Պարույր Սևակ գյուղ
56	Տիգրանաշեն գյուղ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

57	Բազարան գյուղ
58	Երվանդաշատ գյուղ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

59	Ազատ գյուղ
60	Ախալրաձոր գյուղ
61	Աղբերք գյուղ
62	Այգուտ գյուղ
63	Այրք գյուղ
64	Անտառամեջ գյուղ
65	Ավազան գյուղ
66	Արեգունի գյուղ
67	Արտանիշ գյուղ
68	Արփունք գյուղ
69	Բարեպատ գյուղ
70	Բերդկունք գյուղ
71	Գեղամաբակ գյուղ
72	Գեղաքար գյուղ
73	Դարանակ գյուղ

74	Դպրաբակ գյուղ
75	Լեռնակերտ գյուղ
76	Լճավան գյուղ
77	Ծաղկաշեն գյուղ
78	Կալավան գյուղ
79	Կախակն գյուղ
80	Կուլթ գյուղ
81	Կուտական գյուղ
82	Հայրավանք գյուղ
83	Ձորավանք գյուղ
84	Մաքենիս գյուղ
85	Ներքին Շորժա գյուղ
86	Նորաբակ գյուղ
87	Նորաշեն գյուղ
88	Շատջրեք գյուղ
89	Շատվան գյուղ
90	Ջաղացաձոր գյուղ
91	Սեմյոնովկա գյուղ
92	Վերին Շորժա գյուղ
93	Տրեստուք գյուղ

ԼՈՒՈՒ ՄԱՐԶ

94	Աթան գյուղ
95	Ակներ գյուղ
96	Աինիձոր գյուղ
97	Ամոջ գյուղ
98	Անտառամուտ գյուղ
99	Անտառաշեն գյուղ
100	Ապավեն գյուղ
101	Առողջարանին կից գյուղ
102	Արդվի գյուղ
103	Արծնի գյուղ
104	Արմանիս գյուղ
105	Բենդիկ գյուղ
106	Գոգավան գյուղ
107	Թեղուտ գյուղ
108	Լեռնաջուր (Հալավար) գյուղ
109	Լերմոնտովո գյուղ
110	Լորուտ գյուղ
111	Ծաղկաշատ գյուղ
112	Ծաղկոց (Հայդարլի) գյուղ

113	Կաճաճկուտ գյուղ
114	Կարմիր Աղեկ գյուղ
115	Կողես գյուղ
116	Կրուգայա շիշկա գյուղ
117	Հովնանաձոր գյուղ
118	Ձյունաշող գյուղ
119	Ձորագետ գյուղ
120	Ձորագյուղ գյուղ
121	Ճոճկան գյուղ
122	Մարգահովիտ գյուղ
123	Մարց գյուղ
124	Մեծ Այրում գյուղ
125	Յաղդան գյուղ
126	Նովոսելցովո գյուղ
127	Շամուտ գյուղ
128	Շենավան գյուղ
129	Ուրասար գյուղ
130	Չկալով գյուղ
131	Պաղաղբյուր գյուղ
132	Պետրովկա գյուղ
133	Պրիվոլնոյե գյուղ
134	Ջիլիգա գյուղ
135	Սարալանջ գյուղ
136	Սարամեջ գյուղ
137	Վահագնաձոր գյուղ
138	Փոքր Այրում գյուղ
139	Քարինջ գյուղ
140	Քոբայր (Քոբեր կայարանի) գյուղ
141	Ֆիոլետովո գյուղ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

142	Արագյուղ
143	Բուժական գյուղ
144	Գոռգոչ գյուղ (Կոռչլու)
145	Զովաշեն գյուղ
146	Հատիս գյուղ
147	Նուռնուս գյուղ
148	Ջրաբեր գյուղ
149	Ջրառատ գյուղ

150	Սևաբերդ գյուղ
151	Փյունիկ գյուղ (Ախունդով)

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

152	Ալվար գյուղ
153	Ախուրյան կայարանի գյուղ
154	Աղվորիկ գյուղ
155	Անիավան գյուղ (Անի կայարան)
156	Արդենիս գյուղ
157	Արփենի գյուղ
158	Բագրավան գյուղ
159	Բաշգյուղ գյուղ
160	Բերդաշեն գյուղ
161	Բյուրակն գյուղ (Գյուլլիբուլաղ)
162	Գառնառիճ գյուղ
163	Գոգհովիտ գյուղ
164	Գտաշեն գյուղ
165	Դարիկ գյուղ
166	Եղնաջուր գյուղ
167	Զարիշատ գյուղ
168	Զորակերտ գյուղ
169	Լեռնագյուղ գյուղ
170	Լեռնուտ գյուղ
171	Ծաղկուտ գյուղ
172	Կամխուտ գյուղ
173	Կարմրաքար գյուղ
174	Կաքավասար գյուղ
175	Հարթաշեն գյուղ
176	Հացիկավան գյուղ
177	Ձորաշեն գյուղ
178	Մեծ Սարիար գյուղ
179	Մեղրաշատ գյուղ
180	Մուսայեյյան գյուղ (Բասեն)
181	Շաղիկ գյուղ
182	Պաղակն գյուղ
183	Ջրափի գյուղ
184	Սալուտ գյուղ
185	Սարագյուղ գյուղ
186	Սարապատ գյուղ
187	Սիգավետ գյուղ
188	Վարդաղբյուր գյուղ

189	Փոքր Սարիար գյուղ
190	Փոքրաշեն գյուղ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

191	Ախլաթյան գյուղ
192	Աղվանի գյուղ
193	Աճանան գյուղ (Խալաջ)
194	Անդոկավան գյուղ(Դավիթ Բեկ)
195	Անտառաշատ գյուղ
196	Արծվանիկ գյուղ
197	Բաբիկավան գյուղ(Զեյվա)
198	Բալաք գյուղ
199	Բարգուշատ գյուղ (Արզնակ)
200	Բարձրավան գյուղ
201	Բնունիս գյուղ
202	Բռնակոթ գյուղ
203	Գեղանուշ գյուղ
204	Գեղավանք գյուղ
205	Գեղի գյուղ
206	Գետաթաղ գյուղ
207	Գետիշեն գյուղ (Հաջաթին)
208	Գոմարան գյուղ
209	Գուղեմնիս գյուղ
210	Դաստակերտ քաղաք
211	Դավիթ Բեկ գյուղ
212	Դիցմայրի գյուղ
213	Եղեգ գյուղ
214	Եղվարդ գյուղ
215	Թանահատ գյուղ
216	Թխկուտ գյուղ (Մարալզամի)
217	Իշխանասար գյուղ (Ղզլջուր)
218	Լեհվազ գյուղ
219	Լեռնաձոր գյուղ
220	Լձեն գյուղ
221	Խդրանց գյուղ
222	Խնձորեսկ գյուղ
223	Խորձոր գյուղ
224	Ծավ գյուղ
225	Կաթնառատ գյուղ

226	Կաղնուտ գյուղ
227	Կավճուտ գյուղ
228	Կուրիս գյուղ
229	Հարժիս գյուղ
230	Հացավան գյուղ
231	Ձորաստան գյուղ
232	Ճակատեն գյուղ
233	Մուցք գյուղ
234	Ներքին Խնձորեսկ գյուղ
235	Ներքին Խոտանան
236	Ներքին Հանդ գյուղ
237	Նորաշենիկ գյուղ
238	Նոնաձոր գյուղ (Նյուվաղի)
239	Շենաթաղ գյուղ
240	Շիկահող գյուղ
241	Շիշկերտ գյուղ
242	Շուռնուխ գյուղ
243	Շրվենանց գյուղ
244	Որոտնավան գյուղ
245	Ուժանիս գյուղ
246	Չափնի գյուղ
247	Սևաքար գյուղ
248	Սգնակ գյուղ
249	Սյունիք գյուղ
250	Սրաշեն գյուղ
251	Վահրավար գյուղ
252	Վանեք գյուղ
253	Վարդանիձոր գյուղ
254	Վարդավանք գյուղ (Վերին Գյողաքլու)
255	Վերին Խոտանան գյուղ
256	Տանձավեր գյուղ
257	Տաշտուն գյուղ
258	Տավրուս գյուղ (Դովրուս)
259	Տոլորս գյուղ
260	Տորունիք գյուղ
261	Ցղունի գյուղ
262	Փուխրուտ գյուղ
263	Քաշունի գյուղ
264	Քաջարան գյուղ

265	Օխտար գյուղ
-----	-------------

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

266	Աղավնաձոր գյուղ
267	Աղնջաձոր գյուղ
268	Արտաբույնք գյուղ
269	Արփի գյուղ
270	Գնիշիկ գյուղ
271	Եղեգիս գյուղ
272	Զեղեա գյուղ
273	Թառաթումբ գյուղ
274	Կարմրաշեն գյուղ
275	Հորբատեղ գյուղ
276	Մոզրով գյուղ
277	Չիվա գյուղ
278	Սալի գյուղ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

279	Աճարկուտ գյուղ
280	Այրում քաղաք
281	Բաղանիս գյուղ
282	Բարեկամավան գյուղ
283	Գանձաքար գյուղ
284	Դեբեդավան գյուղ
285	Դեղձավան գյուղ
286	Դիտավան գյուղ
287	Զորական գյուղ (Վերին Քյորփլու)
288	Իծաքար գյուղ
289	Լճկաձոր գյուղ
290	Լուսահովիտ գյուղ
291	Լուսաձոր գյուղ
292	Ծաղկավան գյուղ
293	Վերին Ծաղկավան գյուղ (Տավուշ) (նախկինում Ծաղկավան Տաուշի շրջ.)
294	Կայան գյուղ
295	Կիրանց գյուղ
296	Հաղթանակ գյուղ
297	Հովք գյուղ
298	Չինչին գյուղ

299	Չորաթան գյուղ
300	Սարիգյուղ գյուղ
301	Սևբար գյուղ
302	Վարագավան գյուղ

»:

Հավելված N°4
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2023 թվականի նոյեմբերի --ի N°--Ա որոշման

«Հավելված N°3
Հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2008 թվականի նոյեմբերի 19-ի N°635Ա որոշմամբ

«ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում համարների և կոդերի զբաղեցման

Պայմանները

**(տրված Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2008 թվականի նոյեմբերի 19-ի N°635Ա որոշմամբ)**

1. Թույլտվությունում օգտագործված հիմնական հասկացությունները

1. Սույն թույլտվությունում օգտագործված հիմնական հասկացությունները սահմանվում են հետևյալ կերպ՝
 - 1) Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը.
 - 2) Թույլտվություն ունեցող անձ կամ Լիցենզավորված անձ՝ «ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերություն.
 - 3) Թույլտվություն՝ Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է Լիցենզավորված անձի՝ համարներ և կոդեր զբաղեցնելու իրավունքը և պարտականությունը.
 - 4) Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած

պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. Թույլտվության գործողության ժամկետը

2. Թույլտվությունն ուժի մեջ է մինչև 2033 թվականի նոյեմբերի 19-ը:

3. Լիցենզավորված անձի գործունեության վայրը

3. Լիցենզավորված անձի գործունեության տարածքն է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը:

4. Լիցենզավորված անձի գործունեության էությունը կազմող գործառույթները

4. Թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում արդյունավետ օգտագործել.

- 1) միջազգային ազդակների հանգույցի (ISPC) 2-200-3, 4-233-0, 5-234-1, 5-234-7 և շարժական կապի երկրային 283 (MCC-283) և ցանցային 10 (MNC-10) կոդերը,
- 2) հանրային շարժական կապի ցանցի 41, 44, 55, 95 տարածաշրջանային կոդերը (NDC) և նրանց «xxxxxx» համարային շարքերը, հանրային ամրակցված հեռախոսային ցանցի տարածաշրջանային կոդերը (NDC) և նրանց համարային շարքերը (հավելված N2, աղյուսակ N2),
- 3) հանրային ամրակցված հեռախոսային ցանցի 6038, 6042, 6044, 6050, 6051, 6052, 6053, 6054, 6065 ոչ աշխարհագրական կոդերը և նրանց «xxxx» համարային շարքերը,
- 4) անվճար զանգահարվող (\$րի \$ոն) 800 00000-00049, 800 00185 և հավելվածարով ծառայությունների 900 00200-00249, 900 01313 համարները,
- 5) հատուկ ծառայության «105» կոդը Երևանի քաղաքապետարանի կողմից «թեժ գիծ» ծառայության կազմակերպման նպատակով, «113» կոդը՝ «ՍՓՅՈՒՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից մատուցվող տեղեկատվական ծառայության նպատակով,

6) հանրային ամրակցված հեռախոսային ցանցի կարճ կողով ծառայությունների «8388», «8105», «8106», «8107», «8108», «8109», «8112», «8113», «8114», «8115», «8116», «8117», «8120», «8122», «8123», «8988», «8717», «8088», «8909», «8128», «8129», «8140», «8141», «8142», «8803», «8786», «8810», «8890», «8148», «8149», «8150», «8152», «8153», «8154», «8155», «8156», «8157», «8158», «8603», «8903», «8104», «8124», «8642», «8889», «8127», «8833», «8844», «8822», «8599», «8699», «8263», «8264», «8979», «8266», «8747», «8268», «8485», «8283», «8590», «8085» համարները:

5. Լիցենզավորված գործունեության պայմանները

7. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի, այլ օրենքների, Թույլտվության, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:
8. Թույլտվությունը չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
9. Թույլտվության գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:
10. Լիցենզավորված անձը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ապահովել իր կողմից շահագործվող սարքավորումների հուսալիությունն ու անվտանգությունը:
11. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել իր ցանցի բաժանորդների հասանելիությունը դեպի հատուկ ծառայություններ (ոստիկանություն, շտապ օգնություն, հրշեջ ծառայություն և այլն):
12. Համարի կամ կողի զբաղեցման թույլտվություն ունեցող անձն իրավասու է այդ համարը կամ կողը տրամադրել սպառողներին, սակայն իրավունք չունի այդ

համարը կամ կողը փոխանցել այլ օպերատորների կամ ծառայություններ մատուցողների:

